ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 դեկտեմբերի 2019 թվականի թիվ 188-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի թիվ 992-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 67-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ առողջապահության նախարարության 2019 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ /ԱՍ/05/24021-2019/ գրությունը՝

ո ր ո շ ու մ եմ.

1.<<Իջևանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնի համար 2019թ. դեկտեմբերի 18-ին կայացած մրցույթի ընթացքում մրցույթի մասնակից Վազգեն Մարգարյանի կողմից ներկայացված բողոքի քննարկման նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Գագիկ Մելիքբեկյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի իրավաբանական բաժնի վարիչ

Հարություն Քոչարյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի վարիչ

Մարիամ Երիցյան - ՀՀ առողջապահության նախարարության իրավաբանական վարչության օրենսդրության կատարելագործման և վերլուծության բաժնի գլխավոր իրավաբանի պաշտոնակատար

Արմեն Սաֆարյան - ՀՀ առողջապահության նախարարության բժշկական օգնության քաղաքականության վարչության բժիշկ-հանրային առողջության

2. Հանձնաժողովին՝ ՀՀ կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի <<Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգը և նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը

հաստատելու մասին>> թիվ 992-Ն որոշմամբ սահմանված կարգով և ժամկետում քննության առնել Վազգեն Մարգարյանի կողմից 2019թ. դեկտեմբերի 18-ին ներկայացված բողոքը և ներկայացնել եզրակացություն:

Հ. ՉՈԲԱՆՅԱՆ

20.12.2019

X

2019թ. դեկտեմբերի 20
ք. Իջևան